ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՊԳՀԾՁԲ-19/34

ք. Երևան 20 09 2019թ..

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Նաիրի Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ռուզաննա Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **11,310,240** (տասնմեկ միլիոն երեք հարյուր տաս հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	**«ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ**
ՀՎՀՀ 02698732	**ՀՎՀՀ 04112197**
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 29
Կառավարական տուն 2,	ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	h/h 2050022238291001
գործառնական վարչություն	
h/h 900011059178	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Ն. Հարությունյան	---------- Ռ. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N

«20» «09» 2019թ կնքված

ՍՊԳՀԾՁԲ-19/34 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափաբաժին	Գումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության						
		Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատուցման ժամկետը*
1	80521100/2	Ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ	**Ծառայությունը նախատեսում է «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» միջոցառման կազմակերպում:** Միջոցառումն ուղղված է երիտասարդական աշխատանքով զբաղվող բոլոր մասնագետներին, երիտասարդների հետ գործնականապես աշխատողներին և բոլոր նրանց, ում աշխատանքն ուղղված է երիտասարդների հիմնախնդիրների լուծմանը: Միջոցառումը ներառում է երիտասարդական աշխատողի պատրաստման ու վերապատրաստման բազային ծրագրի թեմատիկ պլանը՝ առանձնացված առկա ուսուցման, գործնական առաջադրանքների և ինքնուսուցման մեթոդական բլոկներով: Միջոցառման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական աշխատանք կատարող մարդկանց համակարգված մոտեցման որդեգրումը: Հաշվի առնելով երիտասարդների համայնքի և երիտասարդների աշխատանքի առանձնահատկությունները՝ վերոնշյալ աշխատանքը ենթադրում է մի շարք անձնային և մասնագիտական որակների համակարգ՝ տվյալ խնդիրները արդյունավետ իրականացնելու համար: Մասնակիցներին ընտրելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) կապահովի համապատասխան հայտարարության տարածումը, որով երիտասարդական քաղաքականության ոլորտում աշխատանքներ իրականացնող երիտասարդները կհրավիրվեն վերապատրաստման: Ստացված հայտերից Ծառայություն մատուցող կազմակերպությունը քննարկելով Նախարարության	դրամ	1	**11310240**	**11310240**	**1-ին փուլ.** Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում, մինչև 2019 թվականի նոյեմբերի 15-ը ներառյալ **2-րդ փուլ.** 2019 թվականի նոյեմբերի 16-17-ը ներառյալ

			երիտասարդական քաղաքականության (այսուհետ՝ ԵՔ) վարչության հետ կընտրի 25 հայտատուների թեկնածությունները՝ նախընտրությունը տալով մարզերից դիմած երիտասարդներին: **Ծրագրի իրականացման համար Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ապահովի դասընթացի կազմակերպումն և անցկացումը** Ծրագիրը բաղկացած է երկու փուլից: **Առաջին փուլը** բաղկացած կլինի երեք մոդուլներից: Յուրաքանչյուր մոդուլ կազմված կլինի առկա պարապունքներից և ինքնուրուն աշխատանքներից՝ ընդհանուր 64 առկա և 128 ինքնուրույն աշխատանքային ժամեր: Ինքնուրույն աշխատանքը ենթադրում է դասընթացավարի կողմից հանձնարարած գործնական առաջադրանքների իրականացում, դրանց ուղղորդում և մեթոդական աջակցություն: Երեք առկա մոդուլները կվարեն 6 դասընթացավար: **Ծառայություն մատուցող կազմակերպությունը ապահովելու է՝** **1.** 6 դասընթացավարների առկայությունը (դասընթացավարների աշխատանքի բնութագիրը և անհրաժեշտ հմտությունների ցանկը համաձայն **հավելված 1.1-ի**) **2.** 3 փորձագետների առկայությունը (փորձագետների աշխատանքի բնութագիրը և անհրաժեշտ հմտությունների ցանկը համաձայն **հավելված 1.2-ի**) **3.** Համակարգողի առկայությունը (Համակարգողի աշխատանքի բնութագիրը և անհրաժեշտ հմտությունների ցանկը համաձայն **հավելված 1.3-ի**) Դասընթացավարների, փորձագետների և համակարգողի ընտրությունն անհրաժեշտ է իրականացնել Նախարարության ԵՔ վարչության համաձայնությամբ: **Դասընթացի անցկացման համար անհրաժեշտ գրենական պիտույքները՝** **Գրիչ գնդիկավոր 25 հատ** Կապույտ գնդիկավոր գրիչ թափանցիկ պլաստմասե կաղապարով **Նոթատետր 25 հատ** A5 չափի 70 թերթ վերևից պարույրով, վանդակավոր **Թղթապանակ 25 հատ** Թղթապանակ ռետիններով A4 չափի, գույնը կապույտ **Թուղթ ֆլիպ չարթի 3 հատ** Թուղթ ֆլիպչարթի գրատախտակի համար 60x90 25 թերթ **Մարկեր 8 հատ** Մարկեր ընդգծիչ, կապույտ, կարմիր, կանաչ, սև գույնի: Յուրաքանչյուր գույնից 2-ական					

			Գունավոր թուղթ երկու տուփ Գունավոր թուղթ A4 չափի 500 թերթ **Կպչուն թուղթ 6 հատ** Թերթիկներ նշումների համար կպչուն, 38մմ x 50մմ, 100 թերթ, գունավոր: **Վկայականներ շրջանակով 25 հատ** Վկայական երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթացը ավարտած մասնակիցներին: Չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ԵՔ վարչության հետ երրորդ մոդուլի ավարտից 10 օր առաջ: 25 հատ ապակեպատ փայտե շրջանակ վկայականների համար: Վկայականի օրինակելի ձևը կցվում է հայտին: **Առաջին փուլի առաջին մոդուլը մեկնարկելու է** Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրից (բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում) և տևելու է 5 օր **Առաջին փուլի ուսուցման առաջին՝ առկա մոդուլը, ներառում է վերապատրաստման հետևյալ թեմատիկ կառուցվածքը:** **Թեմա 1՝** Երիտասարդական քաղաքականություն և ծրագրեր: Երիտասարդական աշխատանքի պատմություն: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Թեմա 2՝** Տեղական մակարդակի երիտասարդական քաղաքականություն: **Առկա ժամաքանակը՝** 2 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 6 **Թեմա 3՝** Երիտասարդական հետազոտություններ և ուսումնասիրություններ: **Առկա ժամաքանակը՝** 2 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 4 **Թեմա 4՝** Երիտասարդների կարիքների և ակնկալիքների գնահատում: **Առկա ժամաքանակը՝** 2 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 4 **Թեմա 5՝** Ծրագրերի մշակում, իրականացում, գնահատում: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Թեմա 6՝** Ղեկավարման հմտություններ: Առաջնորդության զարգացում և կարիերային աճ:					

			Առկա ժամաքանակը՝ 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Թեմա 7՝** Թիմային աշխատանքի իրականացում: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Ընդամենը առկա ժամաքանակը՝ 24** **Ընդամենը ինքնուրույն ժամաքանակը՝ 50** **Դասընթացի առաջին մոդուլի անցկացման համար անհրաժեշտ է ապահովել մասնակիցների, վեց դասընթացավարների, համակարգողի, ինչպես նաև երեք փորձագետների ուղևորափոխադրումը Երևան-Վանաձոր և Վանաձոր-Երևան:** Երևան-Վանաձոր-Երևան (35 նստատեղ՝ Ծրագրի 25 մասնակիցների, 6 դասընթացավարների, 3 փորձագետների և 1 համակարգողի տեղափոխությունն ապահովելու համար): Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն): **Առաջին մոդուլի իրականացման համար անհրաժեշտ է ապահովել մասնակիցների, դասընթացավարների, ծրագրի համակարգողի, փորձագետների կեցությունն ու սնունդը** **Հյուրանոց Վանաձորում (ներառյալ դահլիճը)** 35 անձի համար՝ ծրագրի 25 մասնակիցներ, 6 դասընթացավարներ, 3 փորձագետներ և 1 համակարգող (մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում), 4 գիշերակաց և 4 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (1-ին օրը ճաշ և ընթրիք, 2-4-րդ օրերը նախաճաշ, ճաշ, ընթրիք, 5-րդ օրը նախաճաշ) և 35 հոգու համար նախատեսված աշխատանքային տաքացվող դահլիճ: Սնունդը՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, հիմնական ուտեստ (նրբերշիկ կամ պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) ընթրիք (հաց, լոլիկ, վարունգ, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ): Աշխատանքային տաքացվող դահլիճ՝ կահավորված 35 հոգու համար նախատեսված սեղան-աթոռներով, պրոեկտորով, համակարգչով, ինչպես նաև ֆլիպ չարթի գրատախտակով:					

			Առաջին փուլի երկրորդ մոդուլը մեկնարկելու է առաջին մոդուլի ավարտից հետո 30 օր հետո (օրը նախապես համաձայնեցնել Նախարարության ԵՔ վարչության հետ) և տևելու է 5 օր: **Առաջին փուլի ուսուցման երկրորդ՝ առկա մոդուլը ներառում է վերապատրաստման հետևյալ թեմատիկ կառուցվածքը:** **Թեմա 1՝** Երիտասարդական աշխատանք. տեսակները, ձևերը: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Թեմա 2՝** Երիտասարդներին ուսուցման մեթոդաբանություն և հմտություններ: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Թեմա 3՝** Ֆորմալ, ոչ ֆորմանլ և ինֆորմալ կրթություն. առանձնահատկությունները: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Թեմա 4՝** Երիտասարդների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններ: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Թեմա 5՝** Դասավանդման հմտություններ: Դասավանդման հոգեբանական տեխնիկաներ: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 10 **Թեմա 6՝** Երիտասարդների հոգևոր, մշակութային և անձնային զարգացման հմտություններ: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Ընդամենը առկա ժամաքանակը՝ 24** **Ընդամենը ինքնուրույն ժամաքանակը՝ 50** **Դասընթացի առաջին փուլի երկրորդ մոդուլի անցկացման համար անհրաժեշտ է ապահովել մասնակիցների, դասընթացավարների, ինչպես նաև փորձագետների ուղևորափոխադրումը Երևան-Վանաձոր և Վանաձոր-Երևան** Երևան-Վանաձոր-Երևան (35 նստատեղ՝ Ծրագրի 25 մասնակիցների, 6 դասընթացավարների 3 փորձագետների և 1 համակարգողի տեղափոխությունն ապահովելու համար) Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և					

			մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն): **Դասընթացի երկրորդ մոդուլի անցկացման համար անհրաժեշտ է ապահովել մասնակիցների, դասընթացավարների, ծրագրի համակարգողի փորձագետների կեցությունն ու սնունդը** Հյուրանոց Վանաձորում (ներառյալ դահլիճը) 35 անձի համար՝ Ծրագրի 25 մասնակիցներ, 6 դասընթացավարներ 3 փորձագետներ և 1 համակարգող (մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում), 4 գիշերակաց և 4 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (1-ին օրը ճաշ և ընթրիք, 2-4-րդ օրերը նախաճաշ, ճաշ, ընթրիք, 5-րդ օրը նախաճաշ) և 35 հոգու համար նախատեսված աշխատանքային տաքացվող դահլիճ: Սնունդը՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, հիմնական ուտեստ (նրբերշիկ կամ պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) ընթրիք (հաց, լոլիկ, վարունգ, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ): Աշխատանքային տաքացվող դահլիճ՝ կահավորված 35 հոգու համար նախատեսված սեղան-աթոռներով, պրոեկտորով, համակարգչով, ինչպես նաև ֆլիպ չարթի գրատախտակով: **Առաջին փուլի երրորդ մոդուլը մեկնարկելու է երկրորդ մոդուլի ավարտից հետո 30 օր հետո (օրը նախապես համաձայնեցնել Նախարարության ԵՔ վարչության հետ) և տևելու է 4 օր:** **Առաջին փուլի ուսուցման երրորդ՝ առկա մոդուլը ներառում է վերապատրաստման հետևյալ թեմատիկ կառուցվածքը:** **Թեմա 1՝** Գնահատման, ինքնագնահատման և մոնիտորինգի իրականացում: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Թեմա 2՝** Երիտասարդական միջազգային համագործակցություն և ծրագրեր: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 8 **Թեմա 3՝** Թվային երիտասարդական աշխատանք: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 6					

			Թեմա 4՝ Հեռաուսուցման մեթոդաբանություն և ծրագրեր: **Առկա ժամաքանակը՝** 4 **Ինքնուրույն ժամաքանակը՝** 6 **Ընդամենը առկա ժամաքանակը՝ 16** **Ընդամենը ինքնուրույն ժամաքանակը՝ 28** **Դասընթացի երրորդ մոդուլի և Ծրագրի երկրորդ փուլի անցկացման համար անհրաժեշտ է ապահովել մասնակիցների, դասընթացավարների, ինչպես նաև փորձագետների ուղևորափոխադրումը Երևան-Վանաձոր և Վանաձոր-Երևան** Երևան-Վանաձոր-Երևան (35 նստատեղ՝ Ծրագրի 25 մասնակիցների, 6 դասընթացավարների 3 փորձագետների և 1 համակարգողի տեղափոխությունն ապահովելու համար) Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն): **երրորդ մոդուլի և երկրորդ փուլի անցկացման համար անհրաժեշտ է ապահովել մասնակիցների, դասընթացավարների, ծրագրի համակարգողի փորձագետների կեցությունն ու սնունդը** **Հյուրանոց Վանաձորում (ներառյալ դահլիճը)** 35 անձի համար՝ Ծրագրի 25 մասնակիցներ, 6 դասընթացավարներ 3 փորձագետներ և 1 համակարգող (մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում), 5 գիշերակաց և 5 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (երրորդ մոդուլի առաջին օրը ճաշ և ընթրիք, 2-4-րդ օրերը նախաճաշ, ճաշ, ընթրիք, 5-րդ օրը նախաճաշ) և 41 հոգու համար նախատեսված աշխատանքային տաքացվող դահլիճ: Սնունդը՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, հիմնական ուտեստ (նրբերշիկ կամ պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) ընթրիք (հաց, լոլիկ, վարունգ, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ): Աշխատանքային տաքացվող դահլիճ՝ կահավորված 41 հոգու համար նախատեսված սեղան-աթոռներով, պրոեկտորով, համակարգչով, ինչպես նաև ֆլիպ չարթի գրատախտակով:					

			Երկրորդ փուլ Ծրագրի մասնակիցները հնարավորություն կունենան հանդիպելու երիտասարդական աշխատողի վերապատրաստման փորձ ունեցող եվրոպական երկրներից հրավիրված 4 միջազգային և Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի 2 տեղական փորձագետների հետ, որոնք կներկայացնեն երիտասարդական աշխատանքի իրենց փորձը: Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի տեղական երկու փորձագետները տեղեկություններ են հաղորդելու Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի վերաբերյալ՝ հիմք ընդունելով Գյումրու «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի մոդելը, որը Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ աշխատող առաջին երիտասարդական կենտրոնն է: Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի տեղական երկու փորձագետներին կհրավիրի Նախարարությունը: Փորձի փոխանակմանն ուղղված մեկօրյա հանդիպման օրակարգը կհստակեցվի միջազգային և Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի տեղական փորձագետների հետ համատեղ: Միջազգային երկու փորձագետները հրավիրվելու են Էստոնիայի Հանրապետությունից, որոնցից մեկի տոմսը կլինի Տալին-Երևան-Տալին, իսկ մյուսինը Բրյուսել-Երևան-Տալին, իսկ մյուս երկուսը Ֆինլանդիայի Հանրապետության Հելսինկի քաղաքից (Հելսինկի-Երևան-Հելսինկի): Միջազգային փորձա-գետների հրավերներով զբաղվելու է Նախարարությունը: **Ծառայություն մատուցող կազմակերպությունը ապահովելու է 4 միջազգային փորձագետների միջազգային ճանապարհա-ծախսը՝** Տալին-Երևան-Տալին 1 ավիատոմս, Ինքնաթիռի տոմսը պետք է լինի էկոնոմ դասի և ուղեբեռի հնարավորությամբ: Բրյուսել-Երևան-Տալին 1 ավիատոմս, Ինքնաթիռի տոմսը պետք է լինի էկոնոմ դասի և ուղեբեռի հնարավորությամբ: Հելսինկի-Երևան-Հելսինկի 2 ավիատոմստոմս, Ինքնաթիռի տոմսը պետք է լինի էկոնոմ դասի և ուղեբեռի հնարավորությամբ: Միջազգային փորձագետների անձնագրային տվյալները ճշտել Նախարարության ԵՔ վարչությունից: **Միջազգային 4 փորձագետների Զվարթնոց օդանավակայան-Վանաձոր և Վանաձոր-Զվարթնոց օդանավակայան ուղևորա-փոխադրումը (օրերը քննարկել Նախարարության ԵՔ վարչու-**					

			թյան հետ) 4 մեքենա (4 նստատեղ՝ Ծրագրի միջազգային փորձագետների տեղափոխությունն ապահովելու համար) Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն): Տեղափոխությունն ապահովելու ժամը կախված կլինի միջազգային փորձագետների ժամանման և մեկնման ժամերից: **Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի տեղական երկու փորձագետների Երևան-Վանաձոր և Վանաձոր -Երևան ուղևորափոխադրումը** 1 մեքենա (4 նստատեղ) Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն): **Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի տեղական երկու փորձագետների կեցությունն ու սննունդը** 2 անձի համար (մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում), 1 գիշերակաց և 1 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (ընթրիք նախաճաշ, ճաշ) Սնունդը՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, հիմնական ուտեստ (նրբերշիկ կամ պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) ընթրիք (հաց, լոլիկ, վարունգ, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ): ***Միջազգային 4 փորձագետների կեցությունն ու սննունդը*** 4 անձի համար (մեկտեղանոց՝ մեկ մահճակալով տաքացվող համարներում), 2 գիշերակաց և 2 օր սննդի ապահովման ծառայության ձեռք բերում (ընթրիք 1-ին օրը, նախաճաշ, ճաշ, ընթրիք 2-րդ օրը, նախաճաշ հաջորդ օրը) **Սնունդը՝** նախաճաշ (կարագ, պանիր, հաց, հիմնական ուտեստ (նրբերշիկ կամ պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական					

			ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) ընթրիք (հաց, լոլիկ, վարունգ, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ): Երկրորդ փուլի ավարտից հետո դասընթացի մասնակիցներին կհանձնվեն վկայականներ (նմուշը կցվում է)					

*Մատուցման ժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

**«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» միջոցառումն անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի N 56 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Երիտասարդական աշխատողի ինստիտուտի» կանոնակարգի

*** Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի «Երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագիրը հաստատելու» մասին № 301-Ա/1 հրամանի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ն. Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ռ.Վարդանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1

«20» «09» 2019թ կնքված
ՍՊԳՀԾՁԲ-19/34 ծածկագրով պայմանագրի

Դասընթացավարների աշխատանքի բնութագիրը և անհրաժեշտ հմտությունների ցանկը

Աշխատանքի նպատակ

Նախապատրաստել և իրականացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող երիտասարդական աշխատողների վերապատրաստման ծրագրի մասնակիցների ուսուցանման գործընթացը և կազմել իր կողմից իրականացվող մոդուլի ծրագիրը:

Աշխատանքի ծավալ

25 մասնակիցների հետ 32 ժամ ընդհանուր ծանրաբեռնվածությամբ ուսուցանման աշխատանք՝ որից 11 ժամը դեմառդեմ (face to face) դասընթացների ընթացքում և 21 ժամ ուսուցանվողների կողմից իրականացվող ինքնուրույն աշխատանքների ուղղորդում:

Պարտականություններ և պատասխանատվություն

- Ծրագրային ուսուցողական թիմի հետ համատեղ ուսուցման մեթոդաբանության, ուսուցողական խնդիրների մշակում
- Համաձայն ուսուցանման ծրագրի իր կողմից իրականացվող ուսուցանման բլոկի մանրամասն ծրագրի կազմում,
- դասընթացների ընթացքում ուսուցանվողներին 11 ժամ դեմառդեմ (face to face) ուսուցանման իրականացում
- 21 ժամ ուսուցանվողների կողմից իրականացվող ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքների ներկայացում, հետադարձ կապ և աշխատանքների ուղղորդում,
- ուսուցանվողներին դիդակտիկ նյութերի և հավելյալ գրականության տրամադրում,
- երիտասարդական աշխատանքի սեփական փորձի և դեպքերի ներկայացում:
- Յուրաքանչյուր մոդուլից հետո ծրագրի գնահատում (ծրագրի մասնակիցներ, ծրագրի թիմ) և վերլուծություն
- Յուրաքանչյուր մոդուլից հետո հաշվետվության ներկայացում
- Մասնակցություն ծրագրի երկրորդ փուլին

Որակավորման պահանջները

- Երիտասարդական աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ,
- ՀՀ երիտասարդական ոլորտի քաջատեղյակություն (երիտ. քաղաքականության, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտ. ուսումնասիրություններ և այլն)
- Ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության հիմնական մոտեցումներին և գործիքարանին տիրապետում
- Ոչ ֆորմալ կրթության ծրագրերում ուսուցողական թիմերում ներգրավվածության 3 տարվա փորձառություն
- Երիտասարդական աշխատանքի հետ կապված ուսուցողական նյութերի մշակման փորձ
- Տեխնիկական բնութագրում նշված ներկայացված թեմաների շուրջ առնվազն 5 ուսուցանման ծրագրերի իրականացման փորձ,
- Տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն
- Գրագետ բանավոր և գրավոր խոսք, արդյունքների համապարփակ ներկայացման ունակություն
- Վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն
- Թիմում աշխատելու ունակություն

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ն. Հարությունյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ռ. Վարդանյան
(ստորագրություն)

Հավելված N 1.2

«20» «09» 2019թ կնքված
ՍՊԳՀԾՁԲ-19/34 ծածկագրով պայմանագրի

Փորձագետների աշխատանքի բնութագիրը և անհրաժեշտ հմտությունների ցանկը

Փորձագետ-1

Պաշտոնի անվանում	Երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագրի փորձագետ - դասընթացի կառուցվածքի փորձագետ
Աշխատանքի նպատակ	Դասընթացի կառուցվածքի և մոդուլների փորձագիտական վերլուծություն և փոփոխությունների առաջարկում:
Աշխատանքի ծավալ	Դասընթացի երեք մոդուլների, թեմատիկ ծածկույթի և ծրագրի խնդիրներին համապատասխանության ուսումնասիրում:
Պարտականություններ և պատասխանատվություն	• Երիտասարդական աշխատողների վերապատրաստման մոդուլների փորձագիտական ուսումնասիրություն և բարելավման առաջարկությունների ներկայացում, • Դասընթացավարների կողմից առաջարկված թեմատիկ ծածկույթի փորձագիտական գնահատում, • Դասընթացի տրամաբանական կառուցածքի առաջարկությունների ներկայացում, թեմաների հերթականության և կապի փորձագիտական մշակում, • Ուսումնական նյութերի համապատասխանության փորձագիտական գնահատում:
Որակավորման պահանջները	• ՀՀ երիտասարդական ոլորտի քաջատեղյակություն (երիտ. քաղաքականության, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտ. Ուսումնասիրություններ և այլն) • Տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն • Վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն • Թիմում աշխատելու ունակություն

Փորձագետ-2

Պաշտոնի անվանում	Երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագրի փորձագետ - միջազգային համագործակցության փորձագետ
Աշխատանքի նպատակ	Երիտասարդական աշխատողի վերապատրաստման միջազգայի փորձի ուսումնասիրություն և փորձագիտական գնահատում
Աշխատանքի ծավալ	Վերապատրաստման ծրագրի միջազգային բաղադրիչի փորձագիտական վերլուծություն և միջազգային համագործակցության վերլուծություն
Պարտականություններ և պատասխանատվություն	• Երիտասարդական աշխատողների վերապատրաստման միջազգային փորձի ուսումնասիրում և ծրագրում գործընկերների ընդգրկման առաջարկությունների ներկայացում, • Երիտասարդական աշխատանքի միջազգային գործընկերների հետ կապի ու փոխազդեցության ապահովում, • Միջազգային երիտասարդական աշխատաքի անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում և ուսումնակա փաթեթի համալրում:

Որակավորման պահանջները	• ՀՀ երիտասարդական ոլորտի քաջատեղյակություն (երիտ. քաղաքականության, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտ. ուսումնասիրություններ և այլն) • Տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն • Վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն • Թիմում աշխատելու ունակություն

Փորձագետ-3

Պաշտոնի անվանում	Երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագրի փորձագետ - մասակիցների ընտրության փորձագետ
Աշխատանքի նպատակ	Համակարգել և վերլուծել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող երիտասարդական աշխատողների վերապատրաստման ծրագրի մասնակիցների դիմում-հայտերը և ներկայացնել առաջարկություններ Նախարարությանը:
Աշխատանքի ծավալ	Ստացված բոլոր դիմում հայտերի ստացում ծրագրի համակարգողից, դրանց դասակարգում, մարզային ներկայացածության և մոտիվացիոն նամակների ուսումնասիրում:
Պարտականություններ և պատասխանատվություն	• Մասնակիցների ներգրավվման չափանիշերի փորձագիտական քննություն, • Մասնակիցների հայտադիմումների ուսումնասիրություն, վերլուծություն • Ըստ անհրաժեշտության մասնակիցների ներգրավվման արդյունավետության բարձրացման համար հարցազրույցների անցկացում և փորձագիտական խորհրդատվություն, • Հնարավոր շահագրգիռ մասնակիցերի որոնում և փորձագիտական խորհրդատվության ներկայացում,
Որակավորման պահանջները	• ՀՀ երիտասարդական ոլորտի քաջատեղյակություն (երիտ. քաղաքականության, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտ. ուսումնասիրություններ և այլն) • Տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն • Վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն • Թիմում աշխատելու ունակություն

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
_____ Ն. Հարությունյան	_____ Ռ. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1.3

«20» «09» 2019թ կնքված
ՍՊԳՀԾՁԲ-19/34 ծածկագրով պայմանագրի

Համակարգողի աշխատանքի բնութագիրը և անհրաժեշտ հմտությունների ցանկը

Պաշտոնի անվանում	Երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագրի համակարգող
Աշխատանքի նպատակ	Դասընթացի ամբողջական համակարգում
Աշխատանքի ծավալ	Դասընթացի մասնակիցների, դասընթացավարների, փորձագետների աշխատանքի համակարգում, ամբողջականացում:
Պարտականություններ և պատասխանատվություն	• Ծրագրի մասնակցության դիմում-հայտերի հավաքագրում և փոխանցում մասակիցների ընտրության փորձագետին, • Մասնակիցների հետ հետադարձ կապի ապահովում, • Դասընթացի տարածքի հարմարեցում և ուսումնական նյութերի նախապատրաստում, • Մասնակիցների ինքնուրույն աշխատանքների տեղեկատվության համակարգում և ներկայացում Նախարարությանը, • Միջազգային և տեղական փորձագետների հետ աշխատանքի և հետադարձ կապի համակարգում, • Հնարավոր հարցերի համակարգում և ուղղորդում, • Հետադարձ գնահատման նախապատրաստում և արդյունքների ամփոփում: • Ծրագրի ընթացքի վերաբերյալ (երեք մոդուլների և երկրորդ փուլի) ընթացիկ և ամփոփ տեղեկանքների ներկայացում Նախարարությանը:
Որակավորման պահանջները	• ՀՀ երիտասարդական ոլորտի քաջատեղյակություն (երիտ. քաղաքականության, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտ. Ուսումնասիրություններ և այլն) • Կազմակերպչական զարգացած մշակույթ և կարողություններ • Տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն • Վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն • Թիմում աշխատելու ունակություն

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ն. Հարությունյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ռ. Վարդանյան
(ստորագրություն)

Հավելված N 2

«20» «09» 2019թ կնքված
ՍՊԳՀԾՁԲ-19/34 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց, վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին «Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» ծրագրի 4239 հոդվածից՝ ըստ ամիսների, այդ թվում				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր մինչև 30-ը	Ընդամենը
1	80521100/2	Ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ	4 410 994	8 821 987	1 1310 240	11 310 240	11 310 240

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ն. Հարությունյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ռ. Վարդանյան
(ստորագրություն)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

Տրվում է

ՀՀ ԿՐՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ